

ՀՀ Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նիստ

ՕՐԱԿԱՐԳ

04.11.2014թ.

12⁰⁰ Նիստի մեկնարկ: Բացման խոսք՝ մարզպետ, խորհրդի նախագահ
Ա. Ղահրամանյան:

12¹⁵ Օրակարգի ներկայացում և հաստատում:

12³⁰ Երիտասարդությանն ակտիվացնելու և հասարակական կյանքին
ներգրավելու հետ կապված հարցերի քննարկում:

13⁰⁰ 2014թ. կատարված աշխատանքների ամփոփում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նիստի

04.11.2014թ.

ք. Արմավիր

Նիստը վարում էր ՀՀ Արմավիրի մարզպետ, Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահ Ա. Ղահրամանյանը, նիստին ներկա էին խորհրդի 20 անդամներից 17-ը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի երիտասարդության հարցերը համակարգող Ա. Առաքելյանը, ՋԼՄ ներկայացուցիչներ:

Օրակարգում ընդգրկված էր երկու հարց՝

1. Երիտասարդությանն ակտիվացնելու և հասարակական կյանքին ներգրավելու հետ կապված հարցերի քննարկում:
2. 2014թ. կատարված աշխատանքների ամփոփում:

Խորհրդի նիստի օրակարգը ներկայացվելուց և հաստատվելուց հետո, խորհրդի անդամները հանդես եկան երիտասարդությանն ակտիվացնելու և հասարակական կյանքին ներգրավելու հետ կապված առաջարկություններով:

Մեծամոր քաղաքային համայնքի ոչ պետական հատվածի ներկայացուցիչ Արման Ավետիսյանը առաջարկեց մարզի համայնքներում կազմակերպել աշնանային ծառատունկ, ինչը և առիթ կհանդիսանա երիտասարդներին ակտիվացնելու, համախմբելու և հետագայում առավել մեծ ծրագրեր իրականացնելու համար: Առաջարկն արժանացավ խորհրդի մյուս անդամների հավանությանը:

Որոշվեց՝

Համայնքների այգիներում և ներհամայնքային ու միջհամայնքային ճանապարհների եզրերին կազմակերպել ծառատունկ՝ մասնակից դարցնելով նաև դպրոցականների:

Նիստի օրակարգի համապատասխան 2014թ. երիտասարդության ոլորտում կատարված աշխատանքները ներկայացրեց ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի երիտասարդության հարցերը համակարգող Ա. Առաքելյանը:

Նիստի ավարտին Խորհրդի նախագահ Ա. Ղահրամանյանը հորդորեց լինել ավելի ակտիվ և ներկայացնել ոլորտին առնչվող առաջարկներ, որոնք կներառվեն հետագա ծրագրերում:

Խորհրդի նախագահ՝

Ա. Ղահրամանյան

Խորհրդի քարտուղար՝

Ա Ավետիսյան